

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

Սույն աշխատանքային նախագիծը կազմված է համաձայն՝

- «Գազաբեր Արմենիա» ՓԲԸ 23.07.2015թ. № 05-34/3538 գրություն
- «Գազաբեր Արմենիա» ՓԲԸ տեխնիկական առաջադրանք 20.07.2015թ
- Մարտունու ԳԳՄ-ի տեխնիկական պայման, 10.07.2015թ.
- «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղի ստորգետնյա գազատարների կոռոզիոն վիճակի հետազոտման արդյունքներ օբ. ԳԲՑ №12-03/15թ

Սույն նախագծով կազմվել է Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղը սնող մ/ճ ստորգետնյա գազատարի վթարային հատվածի վերատեղադրման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Նախագծվող Ø219x6.0մմ գազատարը ընտրված է պողպատյա էլեկտրաեռակցված խողովակներից համաձայն ԳՕՍՍ 10704-91:

Նախագծվող գազատարի մոնտաժումն իրականացվում է մետաղական հենասյունների վրա $H=0.5\div 2.5$ մ, ճանապարհների հատման տեղերում $H=5.0$ մ բարձրությամբ: Հենասյունների հեռավորությունը ձգ200 գազատարի համար հաշվարկված է $L=12.0$ մ: Պողպատյա գազատարների և ձևավոր մասերի միացումները նախատեսված են եռակցմամբ:

Գազատարները և հենասյուները կոռոզիայից պաշտպանելու համար նախատեսված է յուղաներկվում 2 անգամ: Գազատարների և օղային էլ. հաղորդման լարերի հատման տեղերում, գազատարի վրա տեղադրել պաշտպանիչ ցանց՝ հողանցումով:

Ճանապարհը հատելիս, հողի մեջ “մուտք” և “ելք” հատվածներում ս/գ գազատարը անցկացվում է պողպատյա պատյանով:

Ստորգետնյա գազատարը (ՊԿ25+77-ՊԿ26+22) պաշտպանելու նպատակով կատարվում է գերուժեղ մեկուսացում “PAM” տիպի մեկուսացումով, “մուտք” և “ելք” հատվածներում ս/գ գազատարը անցկացվում է պողպատյա պատյանով:

Շինարարության ավարտից հետո կատարվում են կառուցվող գազատարի փչամաքրում և փորձարկում:

Եզրակացություն

Նախագիծը մշակված է համաձայն գործող ՀՀԾՆ-12.03.01-04 «Գազաբաշխիչ համակարգեր» ՇՆՁ IV 12.101-04 պահանջների և «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի պահանջների:

Աշխատանքները սկսելուց առաջ պետք է նշանակվի տեխնիկական հսկողության ներկայացուցիչ պատվիրատուի կողմից:

Նախագծից բոլոր շեղումները պետք է համաձայնեցվեն պատվիրատուի, շահագործող կազմակերպության և նախագծի հեղինակի հետ:

Կազմեց՝

Ա. Մելքոնյան